

ՊԱՏՄԱԿԱՆ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Պ Ա Տ Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ս . Ն Շ Ա Ն Ի Վ Ա Ն Ո Ւ Ց Ս Ե Բ Ա Ս Տ Ի Ո Ց

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Յաղագս Առաջնորդութեան Սեբաստացի Յովնանեկ Արքեպս.ի եւ վասն բազմադիմի անցիցն որ յաւուրս նորա:

Ընկալեալ Յովնանէս Վարդապետի զՀրովարտակ Արքունական և զԿոնդակ Պատրիս քահանայ՝ Տեսչութեան նահանգիս Սերաստիոյ՝ յաւուր կիւրակէի Վերափոխման Ս. Աճածնին՝ յորում աւուր և ինքն մատուցեալ զԱճոյնի Պատարագ (ՌՄԾԸ = 1809) յերկուորեակ լերինն յաւերակ և անշէն Խորանի՝ որ յանուն Մօր Տեսան կոռուցեալ էր անդր 'ի վող ժամանակաց, յետ երկից աւուրց ել 'ի կնասրիոյ և յուղի անկեալ եկն նհաս 'ի վիճակն իւր 'ի Սերաստիա և լուեալ քաղաքացւոցն և զբոն աուեալ միմիանց իշխանք և ժողովուրդք յոգնախուսն բազմութեամբ ելին ընդ առաջ նորա, և մեծաւ հանդիսիւ և շքեղ փառօք բերեալ մուծին 'ի հրաշափառ Վասն Սրբոյ Նշանի յաւուր երկուշարթիի յիննորորդի աւուր Վերափոխման Սրբոյ կուսին 'ի 23 Օգոստոսի՝ յորում 'ի հանդիսի անդ բազմութեան ժողովոյն՝ 'ի մէջ Ս. Տոճարին զեղեցիկ առննարանութեամբ առաջի արար նոցա զբան Տեսան եթէ «Գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է Ձեզ զայդ ամենայն» և բազում բանիւք յորդորեաց զնոսա բառնալ զերկպառակութիւնն և 'ի մի խորհուրդ միաբանութեան մտանալ զանցեայն ըստ առաքելւոյն և 'ի յառաջադէմսն նկրտիլ, և այսպէս զուարճացուցեալ ուրախացոյց զժողովուրդն և վճարեալ զքարոզն օրհնեաց զնոսա և արձակեաց: Եկն 'ի նմին աւուր և կարապետ Վարդապետ և տեսեալ ըզմիմիանս ուրախացան յոյժ և ելին դիտել և 'ի գիր առնուլ զամենայն զկանս և ըզկարասիս Սրբոյ Մենաստանիս, և 'ի միւ-

սում աւուր զնացեալ առ Քաղաքացեան Չափան Օղլու Մուհամմէտ Բզէշխն զգեցաւ զլօղիկ՝ արձանելիս պատուոյ և էառ զհրամանագիր ըստ թէութեան Հրովարտակին արքունական տուեալ նմա իրր 1500 դահական: Ընկալաւ միանգամայն և զհրամանագիր վասն շինութեան և նորոգութեան Ս. Աճածին Եկեղեցւոյ ներքին գաւթին, զոր եռամսեայ ժամանակաւ յառաջ տապալեալ և կործանեալ էին, և նստեալ անդ յեկեղեցւոջն զաւուրս 30, ետ վերստին ամբողջոյնս կերտել և կանգնել և ապա դարձաւ եկն 'ի Ս. Վանս, և 'ի գալն իւրում եղիտ անդ զՏնդապան և զործակից իւր զկարապետ Վարդապետն, ևս և զՅովակիմ, Գարրիէլ և Չաքարիա Վարդապետք և Սարկաւազ ոմն կարապետ անուն: 'ի Վանս Ս. Հրեշտակապետի էր տեղապան Յարութիւն Վարդապետ՝ սարկաւազաւ միով Յակօբ անուն, իսկ 'ի Վանս Ս. Անապատի Աւետիք Վարդապետ՝ զորս հաստատեաց 'ի պաշտօնի իւրեանց և բարեւոքացէս կոռուվարեաց զՍ. Ուխտս: 'ի սմին ամի Սահակ Վարդապետ Սերաստացի՝ որ էր լուսարար և Տնդապան յաւուրս կարապետ Արքեպս.ի Ակնեցւոյ, հասեալ զօլով յաւուրս ձերութեան, փոխեցաւ առ Քրիստոս և թողեցաւ 'ի Ս. Վանս: Յետ այսորիկ, երկօքին հարազատքն Յովնանէս և կարապետ Վարդապետք 'ի հաշիւ տուեալ զպարտան Սրբոյ Մենաստանիս՝ հանդերձ տոկոսիւքն և տուգանօքն և զծախս արձանագրութեան արտօրէից գտին աւելի քան զքառասուն և մէկ հազար դահականս և աւուրս բազումս խորհնցան 'ի միասին գտանել զելս իրացն և եղերեցին զբանն 'ի հնարագիւտ և յանձանձիր քանադրութիւնս: Վասն որոյ ել կարապետ Վարդապետն անձամբ և զնաց 'ի Գաղատիա առ Գրիգոր Արքեպս. և նպատ օգնութեան գտեալ 'ի

նման է իրրև զեթն քսակ դրամս, զարձաւ 'ի Ս. Վանս: Եւ ապա (ՌՄԹԹ = 1810) կանդակաւ կաթուղիկոսին կիլիկիոյ գնաց 'ի վիճակն Եօղղատու և երկր իրրև 4 քսակ դրամս: Ել և Յովհաննէս Վարդապետ 'ի վիճակն իւր և բաց 'ի տարեկան արգեանց երկր և զերիս քսակ դրամս, զայս ամենայն առեալ պարտուցն հանդարեցան փոքր ինչ: Յաջորդ ամին (ՌՄԿ = 1811) վաղճանեցաւ և ձերուսին Յովակիմ Վարդապետ որ էր Լուսարար յաւուրս Յակարայ Արքեպս. ին, և թաղեցաւ 'ի Ս. Մենաստանիս առաջի դրան մասնատան 'ի ներքին գաւթի: 'ի սմին ամի և Գրիգոր Վարդապետ Սեբաստացի որ էր Լուսարար յաւուրս Գրիգոր Արքեպս. ի գնաց յուխա 'ի Ս. Երուսաղէմ և չև ևս հասեալ անդր վաղճանեցաւ 'ի ճանապարհին զի խորտակեցաւ նաւն՝ յոր մտեալ էր և անկեալ 'ի ծով հեղձաւ 'ի ջուրց անտի և մեռաւ: Յետ այսորիկ 'ի մի խորհուրդ միտրանու թեան գումարեալ զիսաւարաց քաղաքիս կամեցան յղև զՏեսուչ իւրեանց՝ զՅովհաննէս Վարդապետն 'ի Սբ Աթոռն էջմիածին առ 'ի ստանալ զկարգ Եպիսկոպոսութեան և յորդորիչք այսմ խորհրդոս եղևն՝ գրեամբ և բանիւք՝ Ստեփաննոս Արքեպս. Առաջնորդ կեսորիս, Յովհաննէս Արքեպս.՝ նուիրակ Ս. էջմիածին, Մ. Գոսպար և Փիլիպպոս Ամիրոյք և այլք բազումք: Բայց Յովհաննէս և կարողաւ Վարդապետք խորհուրդ արարեալ ընդ միմիանս ա՛չ բարւոք վարձան գնալն յայնր ամի՝ սակս յալուսութեան պարտուց և բարդեալ տոկոսացն, և զի ընկալցին զհաւանութիւն Պատրիարքին Կ. Պոլսոյ, յօժարեցուցին առ այս և զիշխանսն, վասն որոյ և եկաց և մեաց յայնմ ամի: Ապա յաջորդ ամին (ՌՄԿԱ = 1812), պատրաստ եղեալ ըստ արժանւոյն և առեալ զհաճութիւն և զգիր վկայութեան 'ի Յովհաննէս Պատրիարքէ և ընկալեալ զբազմակնիք հրիտակ խնդրանաց քաղաքացւոցն՝ յաւուրս շարաթու Բարեկենդանի Վարդապ. Ս. Սաչին 'ի 21 Սեպտեմբերի ել 'ի Սուրբ Մենաստանէս Յովհաննէս Վարդապետ և յուղի անկեալ գնաց հնաս 'ի Ս. Աթոռն էջմիածին 'ի 6 Նոյեմբերի: Եւ զի ընդ այն ժամանակս հնչէր համբաւ պատերազմի

'ի մէջ Ռուսաց և Պարսից և անթիւ զօրք Պարսից սփռեալ և տարածեալ էին 'ի շրջակայս Սրբոյ էջմիածնի, վասն որոյ յետ իրրև ինն աւուրց՝ 'ի 14 Նոյեմբերի 'ի սօնի Սրբոց մարտիրոսացն՝ Գուրխասայ, ծայրագոյն քահանայապետն ամենայն Հայոց Տ. Եփրեմ Ս. կաթուղիկոս մեծահանգէս նաւակատիս Եկեղեցւոյ արարեալ առաջի իջման ահեղ Ս. Տեղւոյն ձեռնադրեաց զՅովհաննէս Վարդապետն Արքեպս. 'ի վերայ նահանգիս Սեբաստիոյ և յետ չորից աւուրց ողջագուրեալ 'ի Ս. Հայրապետէն և յուղորկուորեալ յԱրքեպս. ացն, ևլ 'ի Ս. էջմիածնէ և առ արարեալ եկն և ժամանեաց 'ի վիճակն իւր 'ի քաղաքս Սեբաստիա և կմուտ 'ի շքեղաշուք Մենաստանս Սրբոյ Նշանի 'ի 27 Դեկտեմբերի ՌՄԿԱ = 1812՝ յաւուր Ուրբաթու: Եւ եղև 'ի դառնալն իւրում 'ի Ս. էջմիածնէ մինչ հնաս 'ի քաղաքս կարին եզիտ անդ զամեն ճարտար ձուլարար և ետ ձուլել զանգակ մի պատուակոսն՝ 150 զահեկոտու և բերեալ զնա ընդ իւր զեանեղեաց 'ի Սբ. Վանս՝ 'ի մէջ կամարին՝ յետկոյս Սրբոյ Սեղանոյն և յետ ամսոց ինչ ևս բերել երկուս զանգակս ևս և զայնոսիկ ևս ետ զետեղել հանդէպ նմին՝ զորս հնչեցուցանեն 'ի հանդիսաւոր աւուրս Տէրունական Տօնից և յամենայն կիւրակէս 'ի ժամ Ս. Պատարագի: Թէպէտ և յաւուրց անտի շինութեան Ս. Ածածին Եկեղեցւոյ ընկալեալ ունէին Ազգ մեր հրամանագիր յԱրքայէ, զի մի մացէ դատաւորական բաժանարարութիւն՝ 'ի ժառանգութեան Հայ ննջեցելոց (Գասսամ) և թագուցեալ պահէին գայն զի մի բացցի դուռն մեծամեծ ծախուց, յետ իրրև ինն ամաց նորոգ ևս ընկալան զհրամանագիր յԱրքունուստ ըստ առաջնայն և ժամ բարեյաջող գտեալ ձեռնառութեամբ Այլազգի մեծամեծաց՝ ևսուսն անցուցանել 'ի Տօմարն Դատաւորաց, վճարեալ իրր 500 զահեկանս, և առին զհրամանագիր 'ի քաղաքապետէն ըստ թէութեան հրովարտակին: Եւ յետ ամաց ինչ եկն նոր Դատաւոր մի, և յայսմ միջոցի բազումք մահացան 'ի ժանտախտէ զոր առիթ պատեն համարեալ Դատաւորին խնդրեաց ուսեստս յԱզգէ մերմէ. և 'ի բացտակ նոցին վճիռ գանգատանաց յղեաց

առ Բողոքապետն՝ Չափան Օղլու Մուհամմադ Բեգէշին, և նա յանիբուսի կալիալ զիշխանսն եզ 'ի շղթայս բանաի և առեալ տասն քսակ դրամս՝ արձակեաց զնրսա, և ապա միջնորդութեամբ ոմանց ընկալան 'ի նմանէ ևս զհրամանագիր բատ արամագրու թեան Արքունի Հրովարտակին և անաի մինչև ցորդ ո՛չ ևս հարցանեն Դատաւորք զննջեցելոցն Հայոց, բաց յոմանց որք վէճս ունելով ընդ միմիանս՝ զիմեն նոցա: Յաջորդ ամին եկն իշխանաւթեամբ 'ի քաղաքս Սերաստիա Պապա Բեգէշին այր հզոր և գաղանարարոյ (ՌՄԿԲ = 1813) և զի ունէր հրաման յԱրքայէն նաւաճել զստանակութիւնս Մարաց Ազգին և այլոց ոմանց, վասն որոյ բազմացուցեալ ստուարոցոյց զզունդս զորաց իւրոց, և յորդան առեալ իրրև զհեղեղս ջուրց յորդառատ գետոց խաղաց 'ի վերայ նահանգիս Աերաստիոյ, որք հեղան զհղան առ հասարակ 'ի քաղաքս և 'ի գիւղորէս և յո՛չ բուել ընտկութեանցն, բաժանեցին զզորս 'ի Տաւնս, ևտուն և Ս Մենաստանիս իրրև 150 զորս Հայթայ կոչեցեալ որք կացին մնացին տատ զերիս ամիսս և յալով վիշտս և վնասս հասուցին Ս Վանուցս, և 'ի բազմութենէ զորացն սասակացու և տիրեաց սով 'ի շրջակայս ողջոյն վիճակիս և եղև զի վաճառեցաւ 1 քոս ցարեան 'ի գին ութսուն և հինգ դանկանի և 1 քոս գարի 'ի գին յիսուն դանկանի, և զրեա թէ ո՛չ զտաւ: Յաւել և ծանրածոնր հարկս 'ի վերայ Ազգիս և որ ողբալին է ձեռն էարկ յեկեղեցիս մեր քննութեան աղագաւ (թէթիթիշ) և այսու պատճառաւ էառ տուգանս իրրև քսան հազար դանկան, ետ և Ս Մենաստանս յայնժամ տասն քսակ դրամս և այսպէս խոհրեալ աւերեաց զերկիրս և սասակացէս նեղեալ տառապեցոյց զԱզգ մեր, և ել և գնաց 'ի վերայ Մարաց Ազգին 'ի կիւրլէր լեռանէ այն է Աղճատաղ (ՌՄԿԲ = 1814) և 'ի Հասովլայս և յաջորդ ամին դարձաւ կրկին 'ի Աերաստիա և առաւել ևս քան զառաջինսն մեծամեծ վիշտս հասոյց նահանգիս: Եւ յետ իրրև եթանասնից աւուրց ընկեցեալ յիշխանութենէ քաղաքիս Սերաստիոյ ևլ և գնաց իշխանութեամբ 'ի քաղաքն կարին այն է էր-

զբրում և յաջորդ ամին եկն զանապան Արքային և աքսարեաց զնա 'ի քաղաքն Պրուսա և բարձաւ չարն 'ի միջոյ: Յետ սորա ընկալաւ իշխանութիւն քաղաքիս Ղալիպ Բեգէշին (ՌՄԿԲ = 1815) այր բարերարոյ և մեղմարնոյթ և 'ի դրան նորին երեւելի և յառաջագլճ էր Սեղանաւոր Յակոր ապա Պետրոսեան Կ. Պոլսեցի, որ և եղ 'ի յիշատակ 'ի Ս Վանս կանթեղ մի արձաթիւ: Յայս ամի ևհաս վախճան Տ. Մարկոսեան Պողոս Վարդապետի Սերաստացւոյ, որ սնեալ և վարժեալ էր առ ոտս Մատթէոս Արքեպս.ի Ամասիոյ և յետ մահուան նորին գնացեալ 'ի Կ. Պոլիս ընկալաւ զՏեսչութիւն նոյն վիճակին և յետ իրրև եթան ամաց պատճառաւ իւրիք աքսարեցաւ 'ի քաղաքս Չարչամպա՝ յորում յետ երկուց ամաց հանգաւ 'ի Քրիստոս և թաղեցու անդ: Յաւուրս յայտոսիկ Տեսուչ նահանգիս Յովհաննէս Արքեպս. հաւանեցուցեալ հաճեցոյց զգլխաւորս և զիշխանս Ազգիս և երաց երկուս վարժարանս, զմին 'ի գաւթի անդ Աւագ Եկեղեցոյն՝ որ յԱնուս Ս. Աճաճնի իրրև Մայր Դպրոց, յորում կարգեաց և զուսուցիչս 'ի կրթել և դաստիարակել զմանկուսն և զմիւսն 'ի Ս Սարգիս Եկեղեցու՝ իրր երկրորդ նմին՝ 'ի նմա ևս կարգելով մանկալարժս աշակերտաց: Յետ այսորիկ (ՌՄԿԲ = 1815), ժրարթուն և հագածու Տեսուչն Ս Մենաստանիս Յովհաննէս Արքեպս. զորձակեցութեամբ հարազատին իւրոյ կարապետ Վարդապետի 'ի ծածուկ ձեռն էարկ շինութեան խաչկալի՝ Աւագ Խորանին Ս Նշանիս և չքնադատեսիլ քանդակօք յորինեալ՝ և ոսկեզօծեալ բազմերփն երանգօք՝ ճաճանչաւորեաց վայելչատիպ, բարձրացոյց և զյատակ Սրբոյ Բեմին աստիճանաշափ մի և զճակասն ետ կերտել քանդակեալ քարամբք և զաստիճանսն զոյգ առ զոյգ գեղեցկափայլ արուեստասհլեսել, և զերկփեղկեան դուսն Սրբոյ Տաճարիս համակ յերկաթի ետ արուեստօրէն կերտել և կանգնեալ 'ի բաց բարձաւ զփայտն առաջին: 'ի սմին ամի (ՌՄԿԲ = 1816) յեթն Մայիսի եկն իշխանութեամբ 'ի քաղաքս Աերաստիա Թիւրք Օսման Բեգէշին Բէճմախցի, այր ուշիմ և աշալուրջ, տեսեալ սորա եթէ տառապին

քաղաքացիքն վասն բնակութեանց՝ ի զօրաց քաղաքացեալեացն, ձեռն էարկ և շինեաց մեծ և վայելուչ պալատ տան է ՁԷՅ-լիկ-Սէրայը՝ ՚ի բնակութիւն Քարաքապեա Բղէշխից և զօրաց նացին, և ինքն անձամբ վերակացու եղեալ շինուածոց և ծախուց՝ տառապանօք աշխատեցնու ամիսս վեց և ծախսեաց իբրև 280 քօակ դրամս՝ խնդրեաց և ընկալու յԱրքունուսա զհրովարտակ և էառ զծախս շինուածոցն ՚ի բոլոր նահանգէս՝ յորմէ ևլ բամին քաղաքիս Սերասիոյ իբրև եօթն քօակ դրամս (ՌՄԿԶ = 1817): Յաւուրս սորա իբրև զամ մի և ամիսս երիս ՚ի խաղաղութեան և յանդորբութեան կայր Ազգ մեր, բայց ՚ի սահա մեղաց մերոց յաջորդ ամին յերեքասասն Յուլիսի՝ հրաման ևկ յԱրքայէ և առեալ զպաշտօնն յափշտակեցին զինչսն և աքօսրեցին զնա ՚ի Պրուսա և հասին զգլուխն՝ առ որ յոյժ արամեցան մերայիք: Հատալուծառ սորին էր Գրիգոր ազա Պօյաճեան Քէմախցի այր լի հաւատով և բարեպաշտութեամբ, որ եղ ՚ի Ս. վանս ՚ի յիշատակ վարագոյր մի մեծ կանաչագոյն մետաքսի (Աթլուզ): Յետ այսորիկ տաւառ յԱրքայէ գիշխանութիւն նահանգիս Սերասիոյ՝ միականի Ալի Բղէշխին որ էր յայնժամ ՚ի կարս քաղաքի, որ ևկն եհաս ՚ի քաղաքս ՚ի 26 նոյեմբերի և կորգեաց փոխանորդ ինքեան զՍերաստացի Սայիտ աղայն, այր յաջողակ ՚ի բոնս և ՚ի զօրծս, և զՔէնան Օղլու Ահմէտ աղայն Բէյիկ քաղաքիս: Եւ զի Բղէշխն էր այր ազա՛ն և ընչաքաղց բնութեամբ, վասն որոյ և յաւել և սաստկացոյց զհարկապահանջութիւնս ՚ի վերայ ստորադասելոց և յեօթնամսեայ ժամանակամիջոցում հնան 560 քօակ դրամ հարկս, և այսու ևս ո՛չ շատացեալ սկսաւ տուգանս առնուլ աստի և անտի կալաւ զօնն Հայազգի և էառ 3000 դահեկանս և արձակեաց և զայլ օնն և էառ 1500 դահեկան: Կալաւ և Միւթէվէլիի Օղլու Փաթլարս Մահմուտն և բաց ՚ի վաւերական ընծայինն էառ 12000 դահեկան, իսկ Բէյիկ Ահմէտ աղայի ընծայատուութիւնն անցեալ գտաւ զ15000 դահեկան, զոր ՚ի միում նուազի քարչեալ զսուրն կամէր սպանանել, և հազ հազիւ ազատեաց փոխանորդն

Սայիտ աղա, վասն որոյ երկօքին սօքա խորհուրդ արարեալ ընդ ժիժիանս զբազումս պատրաստելին յապատմորութիւն՝ ակն ունելով զիպոյղ ժամու: Եւ յետ ամսոյ ինչ ազգ եղև Բղէշխին ՚ի Կ. Պոլսոյ եթէ՛ զգանդատաւորք յաճախեցին վասն քոյ յԱրքունիս, փութա՛ վասն լուսութեան քո ստանալ զիբր քաղմակնիք և առաքեալ յայտը: Եւ մինչ նա կամէր զայս առնել, սօքա խոռովութիւնս յարուցեալ ետուն վաղել զկրպակս և քաղմախուռն ժողովըրդեամբ զնացեալ ՚ի դատարան կալաւ զդատաւորն և խնդրէին զգիր վճար զվասն վաստութեանց Բղէշխին (ՌՄԿԷ = 1818), և ի բացասել նորին խոչտանգեցին զնա զանիւք, քարիւ և փայտիւ, և յայտմ հանդիսի զտան և ընդ այլազգեացն ամանք ՚ի մերոզնէից: Եւ այսու ամբոխիւ տարեալ եղին զնա ՚ի կալանս, ՚ի տան Հաճի Շէյխ կոչեցեալոյն: Զայս լուեալ Բղէշխին և առեալ զփոխանորդն հարիւր զբաճաւորեալ արամք զնացեալ եհան զդատաւորն և երբ յապարանս իւր և մտեալ ՚ի բերդն ամբացաւ ՚ի 12 Յուլիսի, և յերբորդում աւաւրն ևկն կոյր իպրահիմ Զօրապետն իբր 100 արամքք առ Բղէշխն եմուտ ՚ի բերդն և սկսան մարանչիլ ընդ ամբոխին, արձակելով հրացանս, խնդանօթս և ուսմբս, և յետ աւուրց ինչ ՚ի 27 Յունիսի ևկն և միւս զօրապետն Մուհամմէտ իբր 200 զօրօք և կամէր մտանել ՚ի բերդն, այլ զի քաղաքացիք լուսագոյնս ամբացուցեալ էին զմարտկոցն իւրեանց և պատեալ պաշարեալ էին զբերդն և զապարանս Բղէշխին, վասն որոյ մարդ եղեալ ո՛չ թողին մտանել նմա ՚ի ներքս, և աստի սկսան յաճախել չարիք ՚ի վերայ քաղաքիս, զի ՚ի բերդէն անխնայ հարեալ վիրաւորէին և սպանանէին զքաղաքացիսն և արտաքուստ զօրս զտանէին ՚ի քաղաքացուցն օտարականաց՝ կողպալէին, մերկացուցանէին, վիրաւորէին և սպանանէին: Ընդ որս և զմանկուսնս Հայոց և այլազգեաց յափշտակեալ յեղերաց քաղաքիս տանէին և յետ յուով տուգանս առնելոյ՝ արձակէին և յամենայն օր ո՛չ ինչ տեսանիւր ՚ի վիճակիս, բայց եթէ աւարտութիւն և սպանութիւնս Եւ յետ սակաւ ինչ աւուրց՝ յերբորդի աւուր ամս-

եանն Յուլիսի եւ Մէնէմէտն 'ի Բոզնիկէ իբր 300 զօրօք և եկն 'ի Դաւրայ՝ թէ-պէտեւ ո՛չ ոք էր անդ 'ի բնակչացն. և նստաւ անդ օրն այն, և 'ի մէջ գիշերի եւ պտտերագմաւ 'ի վերայ քաղաքիս և ոչինչ կարաց առնել, և ընդ լուսանալն կրկին դարձաւ 'ի Դաւրայ. ելին և զօրք քաղաքին զհետ նոցա և հանին վառեցին զնոսա 'ի գեղջէն և բերին հանդէպ Սրբոյ Մենաստանիս և սատ սկսան մարտնչել ընդ միմեանս յայգուէ մինչև ցերեկոյ, հարին զոմն ալազգի 'ի քաղաքացւոցն և սպանին, և մերկացուցեալ խայտառկաբար թողին և զնացին: Եւ յայսմանէ ջերմացեալ սասակացաւ պտտերագմն և բազմաթիւնք ևրկուց կողմանցն բազխէին զիրար և հուսկ ապա զիմաւ 'ի վերայ միմեանց, խառնեցան ընդ իրեարս և 'ի սասակաւթեան ծխոյ հրացանիցն և 'ի փոշոյ, որ յտից մարդկանց և երկվարացն՝ անտեսանելի եղև աչաց բազմաթիւնքն անթիւ: Եւ յետ պահու միոյ իբրև վերացաւ ծուխն և փոշի, յաղթադք երևեցան քաղաքացիք և հակառակօրդք՝ պարտեալ՝ փախստական եղին: Յետ չօրից աւուրց յաւթ Յուլիսի, կրկին գունդ կազմեալ զօրապետին եկն 'ի վերայ քաղաքիս՝ 'ի կողմն Ղլսվուզ կոչեցեալ թաղին, և վարեալ անտի զՂնկս սխարաց և եզանց ընդ որս զամանս 'ի մանկանց Հայոց և ալազգեաց տարաւ 'ի Բոզնիկ: Յայնմամ յորդօրեւով զմիմեանս ելին զկնի նոցա զօրք քաղաքին և թափեալ զամենայն դարձուցին յետս, և բասակապէս պտտերագմեալ ընդ նոսա մինչև ցերեկոյ և զօրացուցեալ զհարաւածան, փախստական արորին զնոսա առաջի իւրեանց և զաւար նոցին տեսալ զարձան 'ի քաղաքող յաղթանակաւ: 'ի սմին մամանակի զօրացաւ կողմն Բոզնիսին 'ի կ. Պոլիս, և փոխարքայն հաճեցոյց զարքայն և եհան հրովարտակ զի Սեբաստացիքն հնազանդեցին կոյր Ալի Բոզնիսին և տոցին յարսորումն զերկօսին զլիսուորս տպասամբացն, իսկ եթէ ո՛չ կամին, իսպառ կատարեցին բնակիչք քաղաքին, և այսմ զարծադիր կարգեաց զգոնապանապետն Էօմէր-Քէշիք, յայր գաղանարարոյ և արիւնարբու և թիկնապան նմին զԶափան

գառէ Մէնէմէտ Բոզնիսն Գոնեաի, զԶաւալօղլու Նաթուլլուս Փաշայն Աթիօն-Պարահիսարի, զՆուրի Փաշայն Մատէնի, զԳարուտան Մուհամմէտ Փաշայն Տրապիզոնի, զՀաֆըզ Ալի Փաշայն Ախցխոյի, զՂալէնաէր Փաշայն Մարաշու և զԷմին Փաշայն Կեսարիոյ և չորեքասասն գունդ զօրք 'ի Պոլսոյ 56 թնդանօթիւք և 'ի նահանգաց սոցին ելեալ զօրք իբրև 90000 սկսան գալ հետզհետէ և պաշարել զքաղաքս և զՍ. վանս, և զի նախ քան զամենեսին եկն եհաս Նաթուլլուս Փաշայն և եմուա 'ի Բոզնիկ, 'ի 22 Յուլիսի, եկն և Էօմէր Քէշիքն և Սայիտ աղայն բազում զօրօք, յաջորդ աւուրն իբր 300 անձինք ելեալ 'ի քաղաքացւոցն՝ հանդերձ Հաճի Շէյխիւն զնացին 'ի Բոզնիկ 'ի տեսնօցին, անդ Սայիտ աղայն զվազմի մթերեալ զգառնաթիւն սրտի թափել կամեալ զհրամայեաց զօրացն շտմանարար, հարկանել զքաղաքացիսն, որք հարեալ զամանս սպանին, զամանս վիրաւորեցին և մերկացուցին և զայսն մաղապուր փախըտական արարին և եթէ չ'էր հասեալ յօգնութիւն Նաթուլլուս Փաշայի հանդերձ զոնապանապետուն կտտորէին զամենեսին: Յայսմ տեղուջ վէրս բնկալաւ և ոմն յկղզէս մերմէ՝ Քիթիճի Տիրացու Պօղոս^(*) և յետ աւուրց ինչ փոխեցաւ տա Աստուած՝ որոյ զհոգին յուսուորեցէ Տէրն մեր: Եւ 'ի միւսում աւուր յղեցին ընդ Հաճի Շէյխիւն զԱրքունի Հրովարտակն 'ի քաղաքն. զոր ընթերցեալ քաղաքացիքն հնազանդեցան հրամանացն Արքային և անձնատուր եղին յարսորս Քէնան Զառէ Անմէտ և Միւթէվէլիի օղլու Մահմուտ աղայք: Եւ յայնմ աւուր ձեռն էտրկ Միսկանի Ալի Փաշայն և եղ 'ի չղթայս բանտի աւելի քան զհարիւր անձինս յալազգեաց և զինն 'ի միւսմ նուազի սպան և արար ծանր հարկապահանջութիւնս, 450 և ըստ ոմանց 600 քսակ զբամու: Ապա սկսան մեծամեծք ալազգեացն՝ սրղէս դատաւորն, զանապանն, փոխանորդն

(*) Սա է հայր հաւուր իմոյ՝ յորմէ սերեալ եմ այսպէս՝ Պօղոս ձնանի զՊետրոս, Պետրոս ձնանի զՍտեփան և զԱրքաճամ, Ստեփան ձնանի զՊօղոս և զՏիգրան, զրիչ՝ պատմութեանս:

Բեզէշիսին Ստյիտ աղայն, գանձապետն և
 այլք ոմանք գորարնս հնարել Ազգիս, դո-
 րոց կրիսն զանխլարար հաճեցոյց Յով-
 հաննէս Արքեպոս, որով և ո՛չ ինչ Քնաս
 եղև Ազգիս մերում յայսմ միջոցիս: Եւ
 յետ 21 աւուրց աւուա յԱրքայէ գիշխա-
 նութիւն քաղաքիս Նաթուլլա՝ Փաշայի
 Սերաստողւոյ, որ կլեալ 'ի Բագնիկ գիւղէ
 մեծաւ հանդիսիւ եկն և եմուա 'ի քաղաքս
 'ի 22 Օգոստոսի- իսկ Ալի Բեզէշիսն միա-
 կանի զնաց իշխանութեամբ յԱֆիօն-Գա-
 րոնիսար 'ի տեղի Նաթուլլա՝ Փաշային:
 Յայսմ Պատմութեանս վայելուչ վարկաք
 հարստացուցանել զգործ մեր, ըստ որում
 զարհուրելեաց զարհուրելի և սոսկալի
 վտանգուար կէտ մահուան Տէր անցոյց
 զմերազնէիւք զի 'ի վերջին պաշարման
 անդ առ հասարակ ամենեքին Հայքս և
 այլազգիք տկն ունէին առաւել մօտալուս
 օրնասի և դառնագոյն մահուամբ զբուրի
 'ի կենաց՝ քան հանդիպիլ կենդանութեան,
 յորում պահու Փրկիչն Տիեզերաց՝ զԱն-
 ճառահրաշն՝ ներգործեալ զգորութիւն՝
 յի՛տս նահանջեաց զանողորմ սուր նոցին
 'ի պարանոցաց մերայնոց և զերծոյց ըզ-
 նոսա իբրև զայծեամս և իբրև զհուս
 յորոզայթից, դարձուցանելով՝ ըստ եզե-
 կիսյ՝ 'ի դրանց դժոխաց գերեզմանին 'ի
 կեանս կենդանութեան, և ո՛չ շնորհեաց
 նոցա զՅարութիւն՝ ո՛չ պակաս քան ըղ-
 չորեքօրեայ մեռեալն կոչելով 'ի գերեզ-
 մանէն: Եւ թէպէտ յալով Քնասք և տա-
 րապակրութիւնք եղեն այլ չորս անձինք
 և եթ մեռանին հրոցանիւ յԱզգէ մերմէ
 և չորս վիրաւորեալք, իսկ յայլազգեացն
 մեռանին իբր 100 անձինք և 85 վիրա-
 ւորեալք խնդացան: Յայսմ յոգնավորով
 մամանակիս պատմի և այսինչ՝ 'ի հաւա-
 տարիմ լսողաց 'ի բերանայ նոյնիսկ այ-
 լասեռիցն: Ճիղճ Տէրուքն որք էին յԱզգէ
 Քրդաց՝ 'ի զօրաց անախ եղբոր Միականի
 Իպրահիմին որք էին 'ի Բագնիք, 'ի միում

գիշերի խրախուսեալ զմիմիանս և կլեալ
 յերիվար դան գանխլարար 'ի վերայ Սրբոյ
 Մենաստանիս առ 'ի յաւար առնուլ զնա
 և թէպէտ գիտակ իսկ էին զի իբրև 50
 կամ 60 հետեակք սպառազինեալք կային
 անգր 'ի պաշտպանութիւն, բայց տկն ու-
 նէին զտանել զնոսա 'ի քուն թանձրու-
 թեան, որպէս գտին իսկ և հուպ եղեալ
 'ի Ս. Վանս 'ի կողմանէ գերեզմանատան՝
 յորում է շիրիմ Պետրոս Գետադարձի և
 կլեալ ընդ խոնար՝ 'ի պարիսպն 'ի վեր
 և մերձեցեալ մեծի պարսպին այսինչ
 ձկաէին և նկրտէին ելանել 'ի վեր յան-
 կարժ 'ի կուսէ փոքր դրան Սրբոյ Վա-
 նուցս վերերեին արք երկու հնձեալ յե-
 րիվար և աէգս 'ի ձեռս իւրեանց և ան-
 բեկ արարեալ զնոսա զարհուրեցուցանն
 և մերձեցուցեալ զնիզակս իւրաքանչիւր
 սք 'ի նոսա՝ որք էին իբրև 30, վարեն
 զնոսա մինչև ցեղանիք և ինքեանք անդ
 աներեսոյթ լինին և յայլում պահու երե-
 ւեցան զօրապետին մի կանաչ և մի կար-
 միր դրօշակաւ զօրք իբրև 2000՝ յորոց
 զահի հարեալ կոչեաց զոմանս եթէ քտե-
 սէք Վարդապետն՝ որչափ զօրս գումար-
 եալէ, և զի՞ պիտոյ է նմայ յոքան զօրսս,
 առ այս մեք ոչինչ ունիմք ասել, և այն-
 ինչ բանքն 'ի բերանն էին և կոչեցեալք
 հայէին զերեւեալ զօրսն՝ ինքն՝ Զօրապետն
 յապուչ կրթեալ նզովս կարգաց անձին
 իւրում, զի այլևս մի մերձեցի Սրբոյ
 Վանիցս: Կեցեալ յԱթու Տեսչութեան նա-
 հանդին Սեբաստիոյ՝ Տեսուն Յովհաննու
 Արքեպոս. ի զամս իբրև քսաներեք և հաս-
 եալ ժամանեալ յաւուրս ձերութեան փո-
 խեցու առ Քրիստոս և թաղեցու մեծաւ
 պատուով 'ի գաւթի անդ Ս. Մենաստանիս՝
 հուպ շիրմին Յակոբայ Արքեպոս. ի Արմը-
 տացոյ յամի Տեսուն 1830 = ԹՄՀԹ:

ՏԻԳՐԱՆ Ս. ՔԻՐԻՇԵԱՆ

(ՄՃոցեալք յազուրդիւ՝ 14)

